ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

նպաստելով հայ-ռուսական հարաբերությունների հետագա ամրապնդմանը,

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ» 2013 թվականի դեկտեմբերի 2-ի Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր),

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի 5-րդ հոդվածը լրացնել 5-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում նշված և Ռուսաստանի Դաշնության տարածքից Հայաստանի Հանրապետություն արտահանվող ապրանքների հայտարարագրումը իրականացվում է առանց Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված ժամանակավոր պարբերական մաքսային հայտարարագրման կիրառման:

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում նշված ապրանքների համար ժամանակավոր մաքսային հայտարարագրերը, որոնք տրվել են 2019 թվականի ինդիկատիվ հաշվեկշիռներին և արձանագրությանը համապատասխան և որոնցով Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն փաստացի արտահանում չի իրականացվել, համարվում են չտրված:»

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կկիրառվի Ռուսական Կողմից Հայկական Կողմի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումը ստանալու ամսաթվից 15 օրը լրանալուց հետո և ուժի մեջ կմտնի Հայկական Կողմից

Ռուսական Կողմի՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին պատասխան գրավոր ծանուցումը ստանալու ամսաթվից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2019 թվականի հոկտեմբերի «4»-ին, երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության անունից՝

Ռուսաստանի Դաշնության կառավարության անունից՝

ПРОТОКОЛ
о внесении изменений в Соглашение между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о сотрудничестве в сфере поставок природного газа, нефтепродуктов и необработанных природных алмазов в Республику Армения от 2 декабря 2013 года

Правительство Республики Армения и Правительство Российской Федерации, далее именуемые Сторонами,

содействуя дальнейшему укреплению армяно-российских отношений,

принимая во внимание Соглашение между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о сотрудничестве в сфере поставок природного газа, нефтепродуктов и необработанных природных алмазов в Республику Армения от 2 декабря 2013 года (далее – Соглашение),

согласились о нижеследующем:

Статья 1

Дополнить статью 5 Соглашения пунктом 5 следующего содержания:

«5. Декларирование товаров, указанных в подпунктах 1 и 3 пункта 2 статьи 1 настоящего Соглашения и вывозимых с территории Российской Федерации в Республику Армения, осуществляется без применения временного периодического таможенного декларирования, установленного законодательством Российской Федерации.

Временные таможенные декларации на товары, указанные в подпунктах 1 и 3 пункта 2 статьи 1 настоящего Соглашения и поданные в соответствии с индикативными балансами и протоколом на 2019 год, фактический вывоз из Российской Федерации в Республику Армения по которым не был произведен, считаются неподанными.»

Статья 2

Настоящий Протокол начинает временно применяться по истечении 15 дней с даты получения Российской Стороной письменного уведомления Армянской Стороны о выполнении ею внутригосударственных процедур, необходимых для вступления в силу настоящего Протокола, и вступает в силу с даты получения Армянской Стороной ответного письменного уведомления

Российской Стороны о выполнении ею внутригосударственных процедур, необходимых для вступления в силу настоящего Протокола.

Совершено в г. Москве «4» октября 2019 г. в двух экземплярах, каждый на армянском и русском языках, при этом оба текста имеют одинаковую силу.

За Правительство Республики Армения	За Правительство Российской Федерации

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019թ. հոկտեմբերի 4-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված համաձայնագրում» փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության պետի պ/կ՝

Տիգրան Գալստյան